



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

6 մայիսի 2017 թվականի N 413 - Ն

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏԻ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Համաձայն Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի ՆՀ-174-Ն հրամանագրի 1-ին կետով սահմանված կարգի 119-րդ կետի՝

1. Հաստատել Արարատյան դաշտի ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցառումների ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2017 թ. մայիսի 6
Երևան



Հավելված
ՀՀ վարչապետի 2017 թ.
մայիսի 6-ի N 413 - Ն
 որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏԻ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԷՏ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը	Պատասխանատու կատարողը	Համակատարողը	Կատարման ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրը	Նշումներ
1	2	3	4	5	6	7
Պրակտիկ (դաշտում)						
1. Ազատ հոսքով, չշահագործվող ինքնաթափ հորատանցքերի խնդրի լուծում	126 ինքնաթափ հորատանցքերի լուծարում կամ կոնսերվացում	ՀՀ բնապահպանության նախարարություն	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն	2017-2018 թթ.	ՀՀ պետական բյուջե, մասնավոր ներդրող	Կպահանջվի մոտավորապես 60 մլն դրամ: Կլինայվի շուրջ 35.0 մլն մ ³ /տարի ջրաքանակ:
2. Լցված, շահագործման համար ոչ պիտանի հորատանցքերի խնդրի լուծում	158 հորատանցքերի լուծարում, ստորերկրյա ջրերի որակի պահպանում	ՀՀ բնապահպանության նախարարություն	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն	2018 թ. 4-րդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե	Կպահանջվի մոտավորապես 316 մլն դրամ:
3. Չշահագործվող, առանց ջրատվության ու առանց փակվանի հորատանցքերի խնդրի լուծում	473 հորատանցքերի կոնսերվացում, ջրային ռեսուրսների քանակի և որակի պահպանում	ՀՀ բնապահպանության նախարարություն	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն	2018 թ. և շարունակական	ՀՀ պետական բյուջե	Կպահանջվի մոտավորապես 189 մլն դրամ:
4. Փակնով փակված հորատանցքերի խնդրի լուծում	23 հորատանցքերի կոնսերվացում, ջրային ռեսուրսների քանակի և որակի պահպանում	ՀՀ բնապահպանության նախարարություն	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն	2017 թ. 3-րդ եռամսյակ	ՀՀ պետական բյուջե	Կպահանջվի մոտավորապես 2 մլն դրամ:
Ձկնաբուծական նպատակով						
5. Ապօրինի և ՋԹ պայմանները խախտած ջրօգտագործողների մոտ տեսչական ստուգումների, ինչպես նաև վարչական վարույթով զննությունների իրականացում	շուրջ 60 ջրօգտագործողների մոտ ջրօգտագործման թույլտվության սահմանված պայմանների ապահովում	ՀՀ բնապահպանության նախարարություն		2017 թ. 2-րդ և 3-րդ եռամսյակ	Չի պահանջվում:	կանխատեսվում է շուրջ 275.0 մլն մ ³ /տարի

1	2	3	4	5	6	7
6. Կիսափակ ջրամատակարարման համակարգի ներդրում	«Բիզամա ֆրուտ» Հայ-Ռուսական ՀԶ ՍՊԸ-ում պիլոտային ծրագրի իրականացում	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	ձկնաբուծությամբ զբաղվող ընկերություններ (համաձայնությամբ)	2017 թ. 4-րդ եռամսյակ	ՄԱԿ-ի ՊԳԿ (FAO) «Բիզամա ֆրուտ» Հայ-Ռուսական ՀԶ ՍՊԸ օրենքով չարգելված այլ միջոցներ	խնայողությունն ըստ պիլոտային ծրագրի արդյունքի
7. «ՀՀ Արարատի և ՀՀ Արմավիրի մարզերի ցամաքորդային (դրենաժային) համակարգից օգտվելու կանոնները, վճարները և օրինակելի պայմանագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	ձկնաբուծական տնտեսություններից հետադարձ ջրերի՝ այդ համակարգերով հեռացման գործընթացի կանոնակարգում	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե	ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն	2017 թ. 3-րդ եռամսյակ	Չի պահանջվում:	
8. 21 ձկնաբուծական տնտեսությունների կողմից Հրագրան-Արաքսյան կոլեկտորից (Կախանովի ջրանցքից) ջրառի իրականացման կանոնակարգում	ջրային ռեսուրսների արդյունավետ և նպատակային օգտագործում	ՀՀ բնապահպանության նախարարություն	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	2017 թ. 3-րդ եռամսյակ	Չի պահանջվում:	
Ռոզման նպատակով						
9. Ռիսկային ջրօգտագործողների, այդ թվում՝ ջրօգտագործող ընկերությունների (այսուհետ՝ ՋՕԸ) մոտ տեսչական ստուգումների իրականացում	ջրօգտագործման թույլտվության սահմանված պայմանների ապահովում	ՀՀ բնապահպանության նախարարություն	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե	2017 թ. 3-րդ եռամսյակ	Չի պահանջվում:	
10. Արարատյան դաշտում ռոզման արդի (ջրախնայող և (կամ) էներգախնայող) տեխնոլոգիաների ներդրում	ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործում	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե ՋՕԸ (համաձայնությամբ)	2017 թ. շարունակական		

1	2	3	4	5	6	7
11. Ջրօգտագործման և ջրահեռացման, ինչպես նաև ջրային համակարգերում կորուստների նորմատիվների առաջարկի ներկայացում	ջրօգտագործման և ջրահեռացման, ինչպես նաև ջրային համակարգերում կորուստների նորմատիվների հաստատում	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե	ՀՀ բնապահպանության նախարարություն	2017 թ. 3-րդ եռամսյակ	Չի պահանջվում:	ջրի խնայողությունն ըստ հաստատված նորմի
12. Կոլեկտորադրենաժային ցանցի պահպանում և արդյունավետ շահագործում (ներառյալ մաքրումը)	գրունտային ջրերի մակարդակի իջեցում	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե		2017 թ. շարունակական		
13. Ռոզման նպատակով օգտագործվող ինքնաշատրվանող հորատանցքերի վրա չափիչ սարքերի (ջրաչափ) տեղադրում և կապարակնքում	շուրջ 100 հորատանցքերի ջրօգտագործման ծավալների նկատմամբ հսկողության իրականացում	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե	ՋՕԸ-ներ (համաձայնությամբ) ՀՀ բնապահպանության նախարարություն	2017 թ. 3-րդ եռամսյակ	ՋՕԸ	
14. Մինչև 2018 թվականի ոռոգման սեզոնի մեկնարկը, ոռոգման օգտագործվող հորատանցքերի վրա առցանց չափիչ սարքերի (էլեկտրա-էներգիայի հաշվարկային) տեղադրում և կապարակնքում ըստ առաջնայնության և հատակ ժամանակացույցի	ջրօգտագործման ծավալների նկատմամբ հսկողության իրականացում	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե	ՋՕԸ-ներ (համաձայնությամբ) ՀՀ բնապահպանության նախարարություն	2018 թ. 1-ին եռամսյակ		
15. Ռոզման համակարգերում ջրակորուստների կրճատմանն ուղղված միջոցառումների մշակում և առաջնահերթությունների սահմանում	ջրակորուստների նվազմանն ուղղված չափերի և գնահատելի միջոցառումների պլան-ժամանակացույց	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե	ՋՕԸ-ներ (համաձայնությամբ) ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն	2017 թ. 2-րդ եռամսյակ		
Ընդամենը						9-15 կետերում նշված միջոցառումների արդյունքում կանխատեսվում է խնայել շուրջ 260.0 մլն մ ³ /տարի ջրաքանակ:
Խմելու-կենցաղային նպատակով						
16. Ջրամատակարար օպերատորի կողմից չապասարկվող, ջրատ իրականացնող համայնքների ընդգրկում ջրամատակարարման կառավարման օպերատորի	ապօրինի ջրօգտագործման կանխարգելում և բացառում, ինչպես նաև օգտագործված ջրերի հաշվառում	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե	«Վեոլիա Ջուր» ՓԲԸ (համաձայնությամբ) ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն	2017 թ. շարունակական	մասնավոր ներդրող	

1	2	3	4	5	6	7
համակարգում		կոմիտե	տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ) ՀՀ բնապահպանության նախարարություն			
17. Առանց ջրօգտագործման թույլտվության ջրառ իրականացնող համայնքների կողմից ջրօգտագործման թույլտվության ստացման հայտի ներկայացում	ապօրինի ջրօգտագործման կանխարգելում և բացառում, ինչպես նաև օգտագործված ջրերի հաշվառում	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն	ՀՀ բնապահպանության նախարարություն տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ)	2018 թ. 1-ին եռամսյակ	տեղական ինքնակառավարման մարմիններ	
18. Ոռոգման շրջանի ավարտին ՋՕԸ-ների կողմից համայնքներին հանձնվող խորքային հորերի համար վերջիններիս կողմից խմելու-կենցաղային կարիքներով շահագործման նպատակով ջրօգտագործման թույլտվության ստացում	ըստ նպատակային օգտագործման՝ ջրի հաշվառում և ջրակորուստների կրճատում, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարում	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե ՀՀ բնապահպանության նախարարություն տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ)	2017 թ. 4-րդ եռամսյակ	Չի պահանջվում:	
Օրենսդրության կատարելագործում						
19. ՀՀ ջրային օրենսգրքում և «ՀՀ ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների նախագծերի ներկայացում ՀՀ կառավարության աշխատակազմ	Արարատյան դաշտում ըստ նպատակի և ժամանակահատվածի օգտագործելի ջրային ռեսուրսների սահմանում, ջրօգտագործման թույլտվության ձևաչափի, ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման գործընթացների հստակեցում, Արարատյան դաշտում ջրօգտագործման ֆինանսական երաշխիքների կիրառման մեխանիզմների օրենսդրական հիմքի ստեղծում	ՀՀ բնապահպանության նախարարություն	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն	2018 թ. 2-րդ եռամսյակ	Չի պահանջվում:	

1	2	3	4	5	6	7
<p>20. Հարկային օրենսգրքում փոփոխություններ</p>	<p>ջրային ռեսուրսների օգտագործման և երկրորդային ջրօգտագործման համար բնօգտագործման վճարի դրույքաչափերի, ջրօգտագործման թույլտվությամբ սահմանված ծավալի և ջրախնայողության խթանիչ համակարգի սահմանում</p>	<p>ՀՀ բնապահպանության նախարարություն</p>	<p>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն</p> <p>ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե</p> <p>ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե</p> <p>ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն</p>	<p>2018 թ. 1-ին եռամսյակ</p>	<p>Չի պահանջվում:</p>	
<p>21. Արարատյան դաշտի ձկնաբուծական տնտեսություններում ավտոմատ կառավարման կենտրոնացված, առցանց համակարգ ներդնելու իրավական ակտերի մշակում</p>	<p>ջրօգտագործման ծավալների նկատմամբ առցանց հսկողության իրականացման տեխնիկական առաջադրանքի և տեղադրման ժամկետների սահմանում (150 Վ/վ-ից ավելի ջրօգտագործման ծավալ ունեցող ձկնային տնտեսություններում մինչև 2017 թ. սեպտեմբերի 1-ը, 100-150 Վ/վ՝ 2017 թ. դեկտեմբերի 31-ը, մինչև 100 Վ/վ՝ 2018 թ. ապրիլի 1-ը) ապահովելով ջրօգտագործման ռեժիմի ծավալների հաշվառումը, հավաքագրումը և էլեկտրոնային եղանակով փոխանցումը, ինչպես նաև շահառուների համար տեղեկատվության հասանելիության ապահովումը:</p>	<p>ՀՀ բնապահպանության նախարարություն</p>	<p>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն</p> <p>ձկնաբուծությամբ զբաղվող ընկերություններ (համաձայնությամբ)</p>	<p>2017 թ. 2-րդ եռամսյակ</p>	<p>Չի պահանջվում:</p>	
<p>Ինստիտուցիոնալ քարտեզի մասեր</p>						
<p>22. Ջրային ռեսուրսների պետական կադաստրի արդիականացում, մասնավորապես, առկա տեղեկատվական և երկրատեղեկատվական (GIS) համակարգերի թարմացում և համապատասխանեցում ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 2-ի «Ջրային ռեսուրսների պետական կադաստրի վարման կարգը</p>	<p>ջրային ռեսուրսների միասնական տեղեկատվական շտեմարանի ձևավորում</p>	<p>ՀՀ բնապահպանության նախարարություն</p>		<p>2017 թ. 4-րդ եռամսյակ և շարունակական</p>	<p>ԱՄՆ ՄԶԳ «Գիտական առաջադեմ տեխնոլոգիաների օգտագործում և համագործակցություն համուն ռեսուրսների համալիր պահպանության» ծրագիր</p>	

1	2	3	4	5	6	7
<p>հաստատելու և Հայաստանի Հանրապետության 2003 թվականի հուլիսի 23-ի N 1060-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 68-Ն որոշմամբ սահմանված պահանջներին</p>						
<p>23. ՀՀ տարածքում (ըստ մարզերի ու տարածաշրջանի առանձնահատկությունների) բնակլիմայական պայմաններից, ըստ յուրաքանչյուր գյուղատնտեսական արտադրության կազմակերպման քարտեզի մշակում</p>	<p>գյուղատնտեսական արտադրանքի համար՝ ելնելով մարզի գոտիականությունից և բնակլիմայական պայմաններից, ըստ յուրաքանչյուր գյուղատնտեսական արտադրության կազմակերպման քարտեզի մշակում</p>	<p>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն</p>	<p>ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն</p> <p>ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն</p> <p>ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե</p> <p>ՀՀ բնապահպանության նախարարություն</p>	<p>2017 թ. 3-րդ եռամսյակ</p>	<p>Չի պահանջվում:</p>	
<p>24. Ախուրյան, Արարատյան և Հրազդան ջրավազանային կառավարման տարածքային բաժինների շենքային, տեխնիկական և հաստիքային համալրում</p>	<p>ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարում</p>	<p>ՀՀ բնապահպանության նախարարություն</p>	<p>ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն</p>	<p>2018 թ. 1-ին եռամսյակ</p>	<p>ՀՀ պետական բյուջե և օրենքով չարգելված այլ միջոցներ</p>	<p>Կպահանջվի մոտավորապես 12,485 հազ. դրամ:</p>
<p>25. Արարատյան դաշտի հիդրոերկրաբանական տվյալների թարմացում և թվայնացում</p>	<p>Արարատյան դաշտի հիդրոերկրաբանական թվայնացած քարտեզ</p>	<p>ՀՀ բնապահպանության նախարարություն</p>	<p>ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն</p>	<p>2017 թ. 4-րդ եռամսյակ</p>	<p>ԱՄՆ ՄԶԳ «Գիտական առաջադեմ տեխնոլոգիաների օգտագործում և համագործակցություն հանուն ռեսուրսների համայնք պահպանության» ծրագիրը</p>	
<p>26. Արարատյան դաշտի ստորգետնյա ջրային ավազանի պաշարի և վերականգնվող ռեսուրսի հաշվարկում</p>	<p>Արարատյան դաշտի ստորգետնյա ջրային ավազանի ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարում</p>	<p>ՀՀ բնապահպանության նախարարություն</p>	<p>ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն</p>	<p>2018 թ. 3-րդ եռամսյակ</p>	<p>ՀՀ պետական բյուջե և ԱՄՆ ՄԶԳ «Գիտական առաջադեմ տեխնոլոգիաների օգտագործում և համագործակցություն հանուն ռեսուրսների հա-</p>	

1	2	3	4	5	6	7
					մայիր պահպանության» ծրագիր	
27. Արարատյան դաշտի ստորերկրյա ջրավազանի եռաչափ մոդելի մշակում	Արարատյան դաշտի ստորերկրյա ջրավազանի երկրաբանական և հիդրոերկրաբանական շերտագրության եռաչափ պատկերի ստացում, ստորերկրյա ջրատար շերտերի առանձնացում և դրանց ծավալների հաշվարկում, ջրատար շերտերում ջրի պաշարի գնահատում, ռեսուրսների ճշգրտում, Արարատյան դաշտի վերականգնվող և օգտագործելի ստորերկրյա ջրերի ճշգրտված ծավալների ստացում	ՀՀ բնապահպանության նախարարություն	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն	2018-2020 թթ.	ԱՄՆ ՄԶԳ «Գիտական առաջադեմ տեխնոլոգիաների օգտագործում և համագործակցություն հանուն ռեսուրսների համայնր պահպանության» ծրագիր	
	Ընդամենը					Կատարված գործողությունների արդյունքում կանխատեսվում է խնայել շուրջ 570.0 մլն մ³/տարի ջրաքանակ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

